

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԵՎ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Միավորի պատճեն

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՝ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույյիկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադիր եղիք պատասխանների ձևաբուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարրերակի համարին համապատասխանող վանդակում դիր՝ X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 45-50-րդ և 66-68-րդ առաջադրանքներում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ դիր՝ X նշանը:

Մարդում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1

Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *հ*:

- 1) ժպիլ-, օր-նանք, արհամար-ել
- 2) խոր-դղավոր, նժղե-, հայթ-այթել
- 3) դժպատե-, խոր-ին, ընդ-ատակ
- 4) չնաշխար-իկ, ընդ-արվել, հեղ-եղատ

2

Համարակալված բառերում բաց թողած տառերը կամ տառակապակցությունները պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

Աստիճանաբար մոռանալով խառնիճաղան-(1) առօր-ական(2) հոգերը և կտրվելով սրտմաշու-(3) ու տա-տկալի(4) մտքերից՝ Երեմ-ն(5) խաղաղ քուն մտավ: Ժու-կալ(6) մայրը բարեհոգի ժայռով նայեց խա-շիկի(7) նմանվող իր որդուն, զգույշ վերցրեց մա-մարյա(8) ե-ոտանու(9) վրա դրված լաջվար-(10) զարդատուփը և դուրս եկավ սենյակից:

- 1) 2-ե, 5-յա, 6-ժ, 10-դ
- 2) 1-զ, 4-խ, 6-ժ, 7-փ
- 3) 1-զ, 3-կ, 9-ո, 10-դ
- 4) 2-ե, 4-խ, 7-փ, 8-ք

3

Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով:

- 1) ՎՈ-ԱՍՇԱՐՈՒՀ ԱՐՁԱ, ԶԻՆԱԿԱՆ ՊԱՐԻՍՊ, ՄԵԽԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ
- 2) Ո-ՈՒՔԻՆՅԱՆ ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆ, ԱՍԵ-ՂԻ ՀՐՎԱՆԴԱՆ, ՊԵՏՐՈՍ ԱՌԱՋԻՆ
- 3) ՍԱՏԱՆԱՅԻ ԿԱՍՈՒՐՁ, ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆ, ՈՒՐԱՐՏՈՒԻ Թ-ԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
- 4) ԱԼՊՅԱՆ ԼԵՇՈՆԵՐ, ՆՈՐ ԳԵՏԻԿԱՎԱՆՔ, ՇԱՍԻՐԱՍԻ ԿԱԽՈՎԻ ԱՅԳԻՆԵՐ

4

Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:

- 1) պատրանք, դիմանկար, ուխտադրուժ
- 2) ակնկոր, քրմապետ, օժտվածություն
- 3) ամրոց, թանձրասաղարք, ավշանյութ
- 4) դեռափրիթ, երկվություն, մրցել

5

Ո՞ր տառակապակցությունը թվային արժեքը չունի:

- 1) ԿԴ
- 2) ՃՅ
- 3) ԺԹ
- 4) ՌՆ

6

Ո՞ր շարքի բոլոր բառերում է գաղտնավանկի ը-ն ճիշտ տեղադրված:

- 1) կ(ը)նճռոս, զտ(ը)նվել
- 2) ձեռն(ը)տու, ընկ(ը)րկել
- 3) դո(ը)նբաց, տ(ը)րտմել
- 4) խ(ը)մբվել, կոք(ը)նել

7

Ո՞ր տարրերակում է բոլոր կամուրջներն այրել դարձվածքի իմաստը ճիշտ բացատրված:

- 1) հնագանդվել ինչ-որ մեկին
- 2) ճակատամարտում հաղթել
- 3) հետդարձի ճանապարհ շրողնել
- 4) միշտ հարձակվողի դերում լինել

8

Փակագծերում տրված բառերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

- ա. Ես (1. տեղի տվեցի, 2. տեղիք տվեցի) մորս հորդորներին և այլս չանհանգստացրի այդ աղջկան:
- բ. Նրա գերեվարության ու կուրացման մասին վկայությունները մեծ մասամբ վիպական ու հորինովի են և չեն կարող (1. հիրավի, 2. հավաստի) ու պատմական լինել:
- գ. Սաստիկ այրող (1. խոյակ, 2. խորշակ) է փշում. կխփի, կխարկի արտ ու արոտ:
- դ. Երկու (1. պնակ, 2. ըմպանակ) սուրճը հանգչում էր փոքրիկ սեղանին:
- 1) ա-2, բ-2, գ-2, դ-1
 - 2) ա-1, բ-2, գ-1, դ-1
 - 3) ա-1, բ-2, գ-2, դ-2
 - 4) ա-2, բ-1, գ-2, դ-2

9

Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:

- 1) պատվարժան-անարզ, գեղատեսիլ-անիրապույր, եղեմ-դժոխք
- 2) վճիտ-պղտոր, նենգ-ժպտադեմ, հնարամիտ-անձար
- 3) համերաշխ-գժտված, առինքնող-վանող, օրինաչափ-պատահական
- 4) պիղծ-սուրբ, գաճաճ-բարձրահասակ, ջրարբի-անջրդի

10

Ո՞ր տարրերակում բառի սխալ բացատրություն կա:

- 1) ռահվիրա-որևէ բանի սկզբնավորող, **սուտակ**-թանկարժեք քարի տեսակ
- 2) պատրաճ-հրապուրիչ, բայց խարուսիկ հույս, **ծխնի**-ծխով հազեցած
- 3) վիրապ-խոր փոս, **խայտալ**-ուրախությունից թռչկոտել
- 4) շեղը-դանակի կտրող մաս, **վարկած**-գիտական ենթադրություն

11

Տրված բառերից որի՞ արմատին չի կարող միանալ **առ-** նախածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:

- 1) ողջույն
- 2) անցյալ
- 3) հավիտյան
- 4) երևույթ

12

Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:

- 1) սրտմտանք, աշխարհակալ, դարակազմիկ
- 2) տնտեսուիի, հրակայուն, հանքաքար
- 3) հնամենի, վարսունինգ, զրախոս
- 4) կրծքանշան, թանկարժեք, պատմահայր

13

Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում **-մեր** վերջավորությամբ:

- 1) չափահաս, լրագիր, ծխամորճ, քարտաշ
- 2) խաչակիր, վաշկատուն, վազր, վիպագիր
- 3) շիկամուկ, այգեգործ, կարնասուն, պատճեն
- 4) սերմնացան, զորամաս, հերթապահ, հրձիկ

14

Ո՞ր շարքում տրված տեսակին **չպատկանող** դերանուն կա:

- 1) ոչ ոք, ոչ մի, ոչ մեկը, ոչինչ-ժխտական
- 2) այսքան, նույն, սրանք, մյուս-ցուցական
- 3) ուրիշ, ովքեր, որոշ, ոմն-անորոշ
- 4) յուրաքանչյուր, բոլոր, ամբողջ, համայն-որոշյալ

15

Ո՞ր նախադասության մեջ հողի գործածության սխալ կա:

- 1) Երբ շնչելը դժվարացավ, Ալյոն հասկացավ, որ զաղիվերն սկսվել է:
- 2) Արքայադուստրը որսում էր նրա հայացքը. արբեցած էր նրանով:
- 3) Աստղերը արշալույսին չքացան, սուզվեցին անհունի մեջ:
- 4) Հանկարծ քույրն երևաց, ինձ տեսավ և կարծեց, թե հանդիմանելու եմ:

16

Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում ու հոլովման:

- 1) որդի, կիրակի, ծերունի, քաղաքացի
- 2) գինի, գարի, ոչ ոք, սպասել
- 3) մորթի, բարդի, ոզնի, պապ
- 4) կաղնի, ամուսին, պատանի, անկողին

17

Ո՞ր շարքում են միայն պարզ ժամանակաձևեր:

- 1) վայր ընկավ, թույլ է տալիս, հավատացինք
- 2) պետք է գնայի, մի՛ թեր, հարց կտամ
- 3) կգամ, չի մոռանա, պիտի հարցներ
- 4) վեր կացավ, հիշեցի, չեմ ների

18

Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:

- 1) Բարեկամս բնակվում էր այդ հեռավոր ու խոլ գյուղում:
- 2) Նա գնում էր մշուշով ծածկված ճամփեզրով՝ զիսահակ ու տխուր խորհելով եղածի մասին:
- 3) Վիշտը նրա մեջ խառնվել էր ուրախությանը:
- 4) Լույսը բացվելուն պես Արամը վերադարձավ յուրայինների մոտ:

19

Ո՞ր շարքի բոլոր բայերն են սահմանական եղանակի:

- 1) չգրեր, խոսում եմ, գնացել էինք, մոտեցրի
- 2) թերել է, սովորելու եմ, չի գա, կերավ
- 3) կորել է, հասկացավ, հուսանք, չեմ հիշում
- 4) կային, չհուսահատվեցին, հմայել են, խնդրեց

20

Ո՞ր շարքում ստորադասական շաղկապ չկա:

- 1) որպեսզի, ապա, նույնպես, բայց
- 2) հետևապես, այնինչ, թեպետ, սակայն
- 3) այլև, որովհետև, իսկ, նաև
- 4) որտեղ, կամ, այլապես, այսինքն

21

Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:

- 1) Այդ հին պատմությունը վաղուց էր մոռացության զիրկն անցել:
- 2) Եթե տեսներ այն, ինչ ես էի տեսել, այդպես չէր վարվի:
- 3) Ազատ ժամանակ նրա հիմնական զբաղմունքը ընթերցելու է:
- 4) Սեքենան շուր էր եկել, բայց բարեբախտաբար վիրավորներ չկային:

22

Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճշշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

Երբ երեխամերից մեկը հասավ լուսամուտին և սկսեց բակել, Սոլոմոնը, արագ լուսամուտը, բռունցքի վայր զլորեց:


(1. բարձրանալ, 2. աղմուկ, 3. բաց անել, 4. հարված)

- 1) 2, 1, 4, 3
- 2) 4, 1, 2, 3
- 3) 2, 3, 4, 1
- 4) 4, 3, 1, 2

23

Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Միասին կարդում էինք, միասին զրունում, և անհավատալի չպիտի լինի, եթե ասեմ, որ զրեթե միևնույն ձևով էինք խորհում միևնույն բանը:



24

Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չէ:

- 1) Մարիամը դստեր ու թոռների հետ հաճախ էր լինում թատրոնում:
- 2) Ժողովուրդը ցնծագին բացականչություններով դիմավորեցին իրենց սպարապետին:
- 3) Որպես բժիշկ՝ նա հարգված էր, բայց նրան՝ որպես մարդ, այնքան էլ չէին սիրում:
- 4) Ուղեգորի արժեքի մեջ մտնում է նաև նախաճաշն ու ընթրիքը:

25

**Պարզ (դերքայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպ-
ված բարդի:**

- 1) **Դժվարությամբ համոզեցի Սկրտիչ Զանանին հետաձգել իր վաղեմի ցանկության
իրագործումը:**
Դժվարությամբ համոզեցի Սկրտիչ Զանանին, որ հետաձգի իր վաղեմի ցան-
կության իրագործումը:
- 2) **Դեղնեմնա խաղալու էր Արուսը՝ այդ դերին հարմար եկող միակ դերասանուիին
քատրոնում:**
Դեղնեմնա խաղալու էր Արուսը, որը այդ դերին հարմար եկող միակ դերաս-
նուիին էր քատրոնում:
- 3) **Մամովը ոչինչ չէր կարող մերժել այդ մեկենասուիիներին՝ իր գոյությամբ պար-
տական լինելով նրանց ամուսինների նյութական օժանդակությամբ:**
Մամովը ոչինչ չէր կարող մերժել այդ մեկենասուիիներին, քանի որ իր գոյությամբ
պարտական էր նրանց ամուսինների նյութական օժանդակությանը:
- 4) **Թուրքիայից փախած հայերը գալիս էին «Մշակի» խմբագրասուն:**
Հայերը, որոնք փախել էին Թուրքիայից, գալիս էին «Մշակի» խմբագրասուն:

26

Ո՞ր նախադասության մեջ հանգման անուղղակի խնդիր կա:

- 1) Աշխատում էինք լուսաբացից մինչև իրիկուն, և մեզ թվում էր, թե մեր ընտանիքում
ոչինչ չի պատահել:
- 2) Նրանց վիշտը անթեղված կրակ էր, որ մերթ բոցավառվում էր որպես պայծառ
հույս, մերթ դառնում մարմրին տվող տկար կայծ:
- 3) Մենք հասկացանք, որ պապս քաղաք է տանելու նաև պոչը ծաղիկ երինջին, որը
մեր բոլորի սիրելին էր:
- 4) Նրանք պատմում էին մեր չարաճճի արարքների մասին, հիշում մեր մանկու-
թյունը:

27

Ո՞ր նախադասության մեջ պատճառի պարագա չկա:

- 1) Սի հավք ծկլքաց ծառի սաղարթում, Վախից վայր ընկավ ծաղիկը ձեռքից:
- 2) Պատճառ չունեմ քեզ չհարգելու:
- 3) Լեզվին լավ չտիրապետելով՝ դժվարանում էր հաղորդակցվել դրացիների հետ:
- 4) Ինչո՞ւ են քարերը մոռացել քայլելը. Երևի տարիքը արածը արել է:

28

Նշվածներից ո՞րը չկա ստորև բերված հատվածում (հատվածը կետադրված չէ):

Մարդը որ ամեն անգամ հայտնվում էր բեմում ներկայացնելու արտիստի անելիքը չհայտնվեց: Ծափերը բուռն ու պահանջող չէին դադարում: Վերջապես բեմ ելավ արտիստը կանգնեց բեմի կենտրոնում ժայխաներից ամենահրապորիչը շորթերին: Համդիսականների արտիստի դեմքին զամված հայացքներում խուացավ անհամբեր սպասումը:

Արտիստն այս անգամ ընտրել էր տերյանական զոհարներից մեկը «Անդարձություն»:

- 1) ստորոգյալի գեղչում
- 2) դերբայական դարձված
- 3) բացահայտիչ
- 4) տրոհվող հատկացուցիչ

29

Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:

1. Սկզբում նա թվարկում է արգելվածները, որոնց մեջ էին բոլոր սոլունները:
 2. Բոլորը հնազանդվեցին, թեև դժվար էր հրաժարվել դարերով եկած սովորությունից:
 3. Քանի որ մինչ այդ Հայաստանում օգտագործում էին ամեն տեսակ միս, արքան գրեց, թե դրանցից որը կարելի է ուտել, որը՝ ոչ:
 4. Ասում են՝ հայ ժողովրդի քաղաքակրթության հարցում մեծ նշանակություն են ունեցել Վաղարշակ թագավորի քառասուն հրովարտակները, որոնցից մեկը նվիրված էր միս ուտելուն:
-
- 1) 4, 2, 1, 3
 - 2) 4, 2, 3, 1
 - 3) 4, 3, 1, 2
 - 4) 3, 2, 1, 4

30

Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

Երազի նման զիշեր է այսօր,
Ու ձյուն է զալիս երազի նման.
Ծերմակ են դարձել դաշտերը բոլոր,
Մարմարե զիշեր՝ անեզր անսահման:

- 1) անձնավորում
- 2) համեմատություն
- 3) մակդիր
- 4) շրջադասություն

31

Ո՞ր տողն է Նահապետ Քուչակի «Քանի՛ ու քանի՛ ասեմ» հայրենից:

- 1) Մըտիկ իմ եարին արէք, զինչ հագեր՝ ամէնն է կանանչ...
- 2) Թուխ ամպն այլ քամպակ արէ՛ք, ի ծաւէն դերձան քաշեցէ՛ք:
- 3) Երբ զիս ի քենէ զատեն, քան զմեռնելն այլ ճար չի լինի:
- 4) Ապա յիմ սրտէս ի դուրս՝ յերկըրէ յերկիր քափեցաւ...

32

Ա. Քակունցի նշված պատմվածքներից որի՞ հերոսներից ոչ մեկը հանդես չի գալիս իր անձնանունով:

- 1) «Մթնաձոր»
- 2) «Խոնարի աղջիկը»
- 3) «Սիրիավ»
- 4) «Ալայիական մանուշակ»

33

Ի՞նչ երազ է տեսնում Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հերոս Թաքուլ իշխանը մատնության զիշերը:

- 1) Նադիր շահը սպանում է իրեն՝ Թաքուլին:
- 2) Թմկաբերդը հիմնահատակ քանդվել է:
- 3) Ցին ու ագռավ լցվել են Թմկաբերդ:
- 4) Վիշապ օձը փաթաթվել է բերդին:

34

Տրված հատվածներից ո՞րն է Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմից:

- 1) Ո՛չ իշխանություն, ո՛չ կրիվ, ո՛չ կին
Չեն հափշտակում հիվանդ իմ հոգին:
Ղողանջն է միայն ձիգ քարավանի
Հեռավոր, անհայտ ճանապարհների
Հրապույրներով դյութում իմ հոգին
Թափառումների տենչով անմեկին...
- 2) Ե՛վ անապատում, և հավերժական
Անուրջում հոգիս կլսե, կզգա
Ղողանջը զանգի տիեզերական
Եվ մեղմ կզգվե տատասկին դժնյա:
- 3) Գ-նա՛, քարավա՛նս, ինձ հետդ քա՛շ տուր
Օտար, ամայի ճամփերի վրա.
Ուրտեղ կհոգնիս, գլուխս վա՛ր դիր
Ժեռ-քարերի մեջ, փշերի վրա:
- 4) Գ-իշերն ահարկու՝ և սև, և հսկա, մի չղջիկի պես թևերը փոեց,
Անծիր թևերը իջան, ծածկեցին քարավանն, ուղին և դաշտերն անավ:

35

Ո՞րն է Դավթի և Փոքր Սիերի մենամարտի պատճառը «Սասնա ծոեր» էպոսում («Սասունցի Դավթ» համահավաք բնագիր):

- 1) Սիերը, տեսնելով այդ աժդահա մարդուն, ուզում է իր ուժը փորձել՝ նրա հետ գոտեմարտելով:
- 2) Սիերին դուր չի գալիս, որ իրեն անծանոթ այդ ձիավորը ճանապարհ իրեն չի զիջում:
- 3) Սիերը զայրանում է, որ մի քուսմորուս մարդ իր ձիու վրա մի երիտասարդ աղջիկ է տանում:
- 4) Սիերը Դավթից պահանջում է նրա նժույգը և մերժում ստանում:

36

Ո՞ր ստեղծագործությունը հեղինակներից որին է:

- | | |
|--------------------|----------------|
| ա. «Տրտունջք» | 1. Պ. Դուրյան |
| բ. «Իրիկունը» | 2. Մ. Մեծարենց |
| գ. «Հին աստվածներ» | 3. Գ. Չոհրապ |
| դ. «Այինկա» | 4. Լ. Շանթ |
-
- 1) ա-1, բ-2, գ-4, դ-3
 - 2) ա-2, բ-1, գ-3, դ-4
 - 3) ա-1, բ-3, գ-4, դ-2
 - 4) ա-2, բ-1, գ-4, դ-3

37

Դ. Դեմիրճյանի «Վարդանանքում» Վարդան Մամիկոնյանը պարսիկներին դիմագրավելու համար նշվածներից ո՞րը չի առաջարկում հայ նախարարներին:

- 1) Ապավինել ռամիկի ուժին:
- 2) Օգնության կոչ ուղարկել Վրաստան, Աղվանք և հունաց բաժնի հայ իշխաններին:
- 3) Դեսպանություն ուղարկել Բյուզանդիա՝ Պարսկաստանի հետ հաշտված այդ տերությանը համոզելու հայերին օգնելու անհրաժեշտությունը:
- 4) Բանսարկություններով թշնամանք լարել պարսից նախարարների մեջ և պարսիկ պաշտոնյաների մի մասին գրավել իրենց կողմը:

38

Տողերի դասավորության ո՞ր տարրերակն է ճիշտ:

1. Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե
 2. Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
 3. Արևն ամռան ու ձմռվա վիշապաձայն բուքը վսեմ
 4. Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում
-
- 1) 1, 4, 3, 2
 - 2) 3, 2, 4, 1
 - 3) 1, 3, 2, 4
 - 4) 3, 2, 1, 4

39

**Տրված քառերից քանի՞սն ունեն հետևյալ կազմությունը՝
արմատ+հողակապ+արմատ.**

նախագահ, որմնասյուն, գերակշիռ, սակագին, ամենատես, երկրեերկիր,
դասացուցակ, ներաշխարհ, շրջակա, հարածուն:

40

Տրված քառերից քանիսի՞ բոլոր վանկերն են քաց.

հոլանի, գեղանի, անհարկի, եղրևանի, բրածո, վերարկու, դեռատի, հիանալի,
վայրենի, ունելի, պիտանի, քառակի:

41

Նախադասություններից քանի՞սն են համառոտ:

- Սրտապնդիչ էր նախարարի խոսքը:
- Սուրբ չափութի բարձրանա մեզ վրա:
- Իրոք, կախարդական է բնությունը:
- Անշուշտ, տարակուսանքները գլուխ էին բարձրացրել:

42

Տրված հատվածում քանի՞ս ածական կա:

Այն պահին, երբ Վարդը մտածում էր այդ ծանր առաքելության մասին, Արշակ քա-
գավորը, շարունակելով իր անհանգիստ երթևեկը, խորհում էր դարձյալ Գնելի մասին:
«Պետք է կանչել մայրաքաղաք և զրուցել հետը,- մտածում էր նա:- Թեև ընդունված
կարգ չէ, բայց զուցե հանձնենք նրան մի բարձր պաշտոն արքունիքում. այդպես նա
չի առնչվի դժգոհ նախարարների հետ»:

43

Տրված ստեղծագործություններից քանիսի՞ հեղինակն է Պ. Մկանը.

«Գանգրահեր տղան», «Եվ այր մի՛ Մաշտոց անուն», «Երկիր Նախրի», «Խոսք իմ որ-
դուն», «Վարք մեծաց», «Դեպի լյառը Մասիս», «Անլոելի զանգակատուն», «Սեր
պատմիչները և մեր զուսանները», «Եղիցի լույս», «Տաղարան»:

44

Քանի՞ս բութ պիտի դրվի տրված հատվածում:

Տասներեքերորդ դարում օրբստորե փքքող Անի քաղաքում հարուստ ու ինքնազոհ
մի իշխան էր ապրում Անանիա անունով: Նա ուներ մի քնքուշ դուստր դեղձան ծամե-
րով կապույտ աշքերով: Աղջիկը ցանկանալով գրավել բոլորի ուշադրությունը հաճախ
ճեմում էր հոր ապարանքի քարե պատշգամբում: Իր գեղեցկությամբ ու ազնվազարմ
նազանքով նա հմայում էր անցորդմերին և ամենքը ամեն ինչ մոռացած նայում էին
նրան:

45 **Ո՞ր հատվածներն են միջին հայերենով:**

1. -Արաքս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած՝
Սգավոր ես ինձ նման։
2. Ցորեկն եմ նետի նըման,
ուր նետեն, ես ի հոն կենամ.
Գիշերն՝ աղեղան նըման,
ես լարթափ՝ ի վար կու մընամ։
3. Դեղին վարդեր մայիսի,
բուրումներով խնկավետ
բալկության մը մեջ հավետ
կը տժզունին մեկուսի։
4. Զիմ եարն ամանաթ կու տամ.
ի վարդին մէջն պահեցէք.
Թէ երբամ ու շուտով դառնամ,
զամանաքս ի տէ՛ր հասուցէք…
5. Ես այգերով ու ցայգերով
Հաճախ մենակ կ'անրջեմ
Անհնարին, երկնագորով
Սեր մը, որուն տերը չեմ։

46 **Ո՞ր նախադասություններում է ընդգծված բառը գործածված փոխաբերական իմաստով:**

1. Մենք կժպտանք, զո՞հ կժպտանք մեռնելիս, Որ երազում երազեցինք ու անցանք։
2. Մի զարմանալի թախծոտ կյանք էր կանաչում դեմք։
3. Կարկաչահոս աղբյուրն այնտեղ թափալում էր մարգարիտ։
4. Չուզել ես նորից դաշտ, անտառ ու լեռ, Գարուն, ամեն տեղ նոր կյանք ես վառել։
5. Նայում եմ, մինչև որ անզոր Գլուխս ծնկիդ է թերպում։

47 **Ո՞ր շարքերում նախադասության անդամի ձևաբանական վերլուծության սխալ կա:**

Հենց անցնում է զիշերը, և արեգակի առաջին ոսկեզօծ շողերն ընկնում են մարմինդ սարսուցնող ցրտից սառած ժայռերին, քարակաքավը ինչ-որ որձաքարի բեկորի վրայից սկսում է երգել։

1. **հենց** - սաստկական վերաբերական, **զիշերը** - **վահ** հոլովման գոյական
2. **մարմինդ** - ստացական հողով գոյական, **վրայից** – տեղի մակրայ
3. **սարսուցնող** - պատճառական բայ, ենթակայական դերբայ, **երգել** - վաղակատար ձևաբայ
4. **ոսկեզօծ** - ածական, **ընկնում** **են** - սոսկածանցավոր բայ, չեզոք սեռ
5. **ինչ-որ** - անորոշ դերանուն, **սառած** - **ե** խոնարհման պարզ բայ, հարակատար դերբայ

48

Նախադասություններից որոնցո՞ւմ է ընդգծվածը դերբայական դարձված:

1. Գնացքի շոգեկառքը զարդարել էին փողփողացող ալ դրոշներով:
2. **Կամքջի վրայով անցնելիս աջ ու ձախ չէր նայում:**
3. Անհրաժեշտ էր մի քանի օրով գյուղ գնալ:
4. Այգեպանը սկսեց այգին մշակել:
5. Ծերունին թափ տվեց ոտքերի փոշին և **առանց շրջվելու հեռացավ քաղաքից:**

49

Վ. Տերյանի ստեղծագործության վերաբերյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:

1. «Իջնում է գիշերն անգութ ու մթին» բանաստեղծությունն ավարտվում է հայրենիքի ճակատագրի վերաբերյալ մոայլ կանխատեսումներով:
2. «Մթնշաղի անուրջներ» շարքը բացվում է «Fatum» բանաստեղծությամբ:
3. «Երկիր Նահրի» շարքում տեղ են գտել ինչպես հայրենիքին, այնպես էլ մորը նվիրված բանաստեղծություններ:
4. «Կարուսել» բանաստեղծության մեջ Տերյանը խոսում է սիրո զգացմունքի մասին, որը ձանձրալի լինելու աստիճան միշտ նույնն է ու կրկնվող:
5. «Հրամեշտի գաղելում» բանաստեղծը տիսրությամբ հրամեշտ է տալիս իր սիրած էակին, որից պետք է անորոշ ժամանակով բաժանվի:

50

Նշել այն բառերի համարները, որոնցում ուղղագրական սխալ կա:

1. հափշտակել, 2. վարքաբեկել, 3. զաղտագողի, 4. ամբասիր 5. մտածածին,
6. բաղդատել, 7. հյուլէ, 8. գղջալ, 9. անդորագիր:

Բ մակարդակ

51

Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում անջատ:

- 1) առ(այն), հիմք(հարկանի), վաղուց(h)վեր, ձեռք(ձեռքի)
- 2) հանել(բերել), դուռ(դռան), կրակ(ու)բոց, օրն(ի)բուն
- 3) դեմ(դիմաց), հաշտ(ու)համերաշխ, գալ(լցվել), տնե(տուն)
- 4) ձեռք(բերել), Նոր(Նորք), կիսով(չափ), ի(փառս)

52

Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է միավանկ:

- 1) փախստական, ավարառու, կետորսանավ
- 2) կուսակցական, կրավիոշի, առաջատար
- 3) թիավարել, ալեծուի, մշտադալար
- 4) մորաքույր, մտադրություն, տղամարդ

53

Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույցներն են կազմված հոմանիշներից:

- 1) գողտրիկ-թաքուն, բանարկություն-սադրանք
- 2) գիշատել-բզկտել, լայնախոհ-ազատամիտ
- 3) թեական-կասկածելի, անաշառ-անկողմնակալ
- 4) աղետ-արհավիրք, ամբարտավան-սնապարծ

54

Ո՞ր շարքում կրկնավոր բարդություն չկա:

- 1) ճեփ-ճերմակ, այսօր-վաղը, դրու-դարպաս
- 2) նետ-աղեղ, անթիվ-անհամար, կենաց-մահու
- 3) մեկ-երկու, աման-չաման, աղմուկ-աղաղակ
- 4) տուն-թանգարան, մարդ-մուրդ, տղա-աղջիկ

55

Ո՞ր նախադասության մեջ վերաբերական չկա:

- 1) Այո՛, Լուսինե Զաքարյանից լավ դժվար է հոգևոր երգ կատարել:
- 2) Նա միայն սպառնում է ձեր արքային, բայց հարձակվել չի համարձակվի:
- 3) Նա հազիվ էր զապում իրեն, որ ձայնը չբարձրացնի:
- 4) Սպասավորներից մեկը բութ հայացքով նայում էր դռանը՝ ըստ երևույթին քունը հաղթահարելով:

56

Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ չկա:

- 1) Հետո առաջս են զալիս ուրիշ պատկերներ, ու լսում եմ ընտանեկան կյանքի զվարք աղմուկը:
- 2) Հակոբը տեսավ, որ անձանոթը քաղաքը լավ չգիտի:
- 3) Նա լավ էր հասկանում, որ ճրագը վառ պահողը որդին է լինելու:
- 4) Ինձ թվաց, թե սպիտակ տան ներսում մեկը գոռգոռում էր և ոտքը խփում գետնին:

57

Ո՞ր շարքի բոլոր քառերն են համապատասխանում նշված տեսակին:

- 1) Վերաբերյալ, շնորհիվ, խստիվ – **քերականական**
- 2) ցավագին, քաջաբար, արյոք – **Այութական**
- 3) գեթ, հարկավ, իրոք – **վերաբերմուճային**
- 4) նախքան, քանակ, քանի որ – **քերականական**

58

Ո՞ր տարրերակում հատկացուցիչ չկա:

- 1) Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր Ուղիների ժապավեններն անհամար:
- 2) Ուկի բոցեր են դառնում ամպերը Նրանց բորբոքուն խարույկներին...
- 3) Երեխի նման խարեցին ինձ շատ, Երազուն ու խենք երեխի նման...
- 4) Կանչում է կրկին, կանչում անդադար Են չքնաղ երկրի կարոտը անքուն...

59

Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

-Ի՞նչ ուժով պիտի հաղթես արարմերին, Մարզպետունի՛ իշխան. մենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունենք,- հարցրեց թագուհին երկյուղած:

- 1) Թագուհին երկյուղած հարցրեց Մարզպետունի իշխանին, թե նա ինչ ուժով պիտի հաղթի արարմերին. նրանք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 2) Թագուհին երկյուղած հարցրեց, թե Մարզպետունի իշխանը ինչ ուժով պիտի հաղթի արարմերին. նրանք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 3) Թագուհին երկյուղած հարցրեց Մարզպետունի իշխանին, թե նա ինչ ուժով պիտի հաղթի արարմերին. իրենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 4) Թագուհին երկյուղած հարցրեց Մարզպետունի իշխանին, թե ինքը ինչ ուժով պիտի հաղթի արարմերին. նրանք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:

60 Ո՞ր տարրերակում է ստորադաս նախադասության պաշտոնը սխալ նշված:

- 1) Այժմ նա հալածվում էր նրանցից, ովքեր ժամանակին աջակցել էին իրեն: (*անջատման անուղղակի խնդիր*)
- 2) Ծիծաղախիտ ծովի ծփանքն այնքան կենարար էր, որ ճակատագրից հալածված մարդիկ մի վայրկյան կարծես մոռացության տվեցին իրենց տառապանքը: (*չափի պարագա*)
- 3) Նրան բվում էր, թե ինքը ժամանակից ու տարածությունից դուրս էր մղված: (*ենթակա*)
- 4) Բոլորին երազանքն այն է, որ մեր հինավորց երկիրը հզրանա: (*ստորոգելի*)

61 Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Հ. Սահյանի «Պապը» բանաստեղծությունն ավարտվում է մարդու և բնության միաձուլման պատկերով:
- 2) Հ. Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի սկզբում հեղինակն ասում է, որ մայր ծին բնազրով վտանգ էր զգացել այն ժամանակ, երբ դեռ գայլի ոչ հոտն էր զգացվում հովտում, ոչ ճայնն էր լսվում:
- 3) Հ. Շիրազը «Թագաղորում» բանաստեղծության մեջ ներկայացնում է բնության հզոր ուժերի առջև թույլ մարդու անզորությունը:
- 4) Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակը պատկերում է աքսորյալների տառապանքը Սիրիում:

62 Հ. Պարոնյանի նշված ստեղծագործություններից ժամրային առումով ո՞րն է դիմանկարների շարք:

- 1) «Քաղաքավարության վճասները»
- 2) «Պտույտ մը Պոլսո քաղերու մեջ»
- 3) «Պաղտասար աղբար»
- 4) «Ազգային ջոջեր»

63 Նախադասության անդամներից քանիսի՞ շարահյուսական պաշտոնն է ճիշտ նշված:

Չինացիները խոսում են իրարից խիստ տարրեր յոթ քարքառներով, որոնք բոլորովիմ էլ հասկանալի չեն այլ քարքառով խոսողին:

- **յոթ** – որոշիչ
- **որոնք** – ուղիղ խնդիր
- **խոսողին** - հանգման անուղղակի խնդիր
- **հասկանալի չեն** - քաղադյալ ստորոգյալ
- **խիստ** – որոշիչ

Տրված քառերից քանի՞սն են կազմությամբ պարզ.

Ազովք, փափուկ, բամբակ, երազկոտ, ճակատ, գունատ, դժխեմ, լցոն:

Մտքերից քանի՞սն են հակասում տեքստի բովանդակությանը կամ չենք բխում նրանից:

Դարեր շարունակ մարդիկ փորձել են ստեղծել տարածության չափման միավորներ: Ուսնահետքերի միջև եղած հեռավորության չափումից առաջացել է ուսնաչափը, արմունկից մինչև միջնամատի ծայրը չափից՝ կանգունը և այլն:

Դրանցից մեծ միավորների առաջացումը կապվում է հողարածանման հետ. հողագործը պետք է համոզված լիներ, որ իր հողակտորը իրեն հասանելիքից ավելի փոքր չէ: Ակզրնական շրջանում ուսնաչափերով չափվող հողակտորներն ակնհայտորեն անհավասար են, քանի որ չափողի հասակից կախված՝ ուսնաչափը կարող էր տարրեր լինել: Բավական երկար ժամանակ չափման խնդիրը լուծել է եզրակացնելու անհնարինությունը, որի չափը սահմանվեց ըստ քազակորի բազկի երկարության: Դրա գրանիտե բնօրինակը պահպում էր պալատում:

Այնուհետև ֆրանսիացի հեղափոխականները ստեղծեցին մետրը, որի՝ որպես չափման միավորի, հիմքում դրված էր Հյուսիսային բևեռից մինչև հասարակածն ընկած հեռավորության 10 միլիոններորդ մասը:

Արեգակնային համակարգում չափումները իրականացնելու համար չափման միավոր ընդունվեց Երկրից մինչև Արեգակ միջին հեռավորությունը: Ավելի մեծ տարածությունների համար օգտագործվում է լուսատարի հասկացությունը: Դա այն հեռավորությունն է, որը լույսն անցնում է մեկ տարվա ընթացքում բացարձակ վակուումում:

- Գոյություն ունեցող չափման միավորների առաջացման հիմնական դրդապատճառներից մեկը կապվում է հողագործության հետ:
- Արեգակնային համակարգում չափումները իրականացնելու համար որպես չափման միավոր ընդունում են Երկրին համեմատաբար մոտ գտնվող Երկնային մարմնների չափերը:
- Ֆրանսիացի հեղափոխականների առաջարկած մետրը կազմում է հասարակածի 10 միլիոններորդ մասը:
- Եզրակացնելու համար չափման միավորի, ընդունումից հետո ամենուրեք հողաչափության ժամանակ օգտագործվում էր կանգունի գրանիտե բնօրինակը:
- Լուսատարին ոչ թե տարածության, այլ ժամանակի չափման միավոր է:

66

Ո՞ր նախադասություններում ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

1. Նրան թվաց ֆետրե գլխարկով մարդու սպիտակ թղթերը արտացոլում են ամեն ինչ ինչպես աղբյուրի վճիռ ջուրը:
2. Զորի բերանին կտրուկ զառիթափի տակ էր կանգնած եղբայրը գայլի համար լարված թակարդը ձեռքին:
3. Գերանը չկոտրվեց կացնով ուժգին հարվածելուց հետո և սղոցով կտրեց:
4. Հայրը երբ էր հնձել լանջի այդ խոտհարքը տղան չէր կարողանում հիշել:

67

Որո՞նք են պարզ բայեր (առանց բայական ածանցի):

1. Ապաստեց, 2. հիմնում է, 3. կառչելով, 4. փախչելիս, 5. կտրտեց, 6. ելնում է,
7. մեծանում եք, 8. բարձրացրեց, 9. մոտենա:

68

Ո՞ր բառերում արմատի հնչյունափոխություն կա.

1. թրթռալ, 2. տիսրություն, 3. փախստական, 4. վարչապետ, 5. սանրվածք,
6. սիզածեմ, 7. վիմագիր, 8. հնագետ, 9. ընդեղեն:

69

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել **Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ** տարբերակներից որևէ մեկը:

1. Փոխադարձ դերանունները չեն կարող կատարել ենթակայի պաշտոն:
2. **Ես, դու, մա, ինքը** դերանունները եզակի թվում ունեն ձևով միմյանցից տարբերվող սեռական և տրական հոլովաձներ:
3. Բոլոր ժխտական դերանունները հոլովվում են:
4. **Այս, այդ, այն** ցուցական դերանունները մատնանշում են և՛ առարկա, և՛ առարկայի հատկանիշ:
5. Ի տարբերություն հարցական դերանունների՝ հարաբերական դերանունները նախադասության անդամ չեն դառնում:
6. **Ով** դերանունը հոլովվում է միայն եզակի թվում:

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել **Ճիշտ է,** **Այսալ է,** **Չգիտեմ** տարբերակներից որևէ մեկը:

1. Բաց վանկի **m** ձայնավորը միշտ հնչյունափոխվում է **q**-ի:
2. Բառասկզբի **m, h, t(b)** ձայնավորները մի քանի բառերում հնչյունափոխվում են **p**-ի:
3. Եթե գաղտնավանկով վերջացող բառի վերջից որևէ մասնիկ է ավելանում, ապա գաղտնավանկի **p**-ն պարտադիր սղվում է:
4. **Յա** երկինչյունը հնչյունափոխվելիս դառնում է **t(b)**:
5. Բառամիջի և բառավերջի **t**-ն միշտ հնչյունափոխվում է:
6. Բառասկզբի **p**-ն երբեք չի հնչյունափոխվում: